Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84.092
9-75G

89.092 7530.
Я-7516.
Зуп Я пуск

1891	1-10.84	21/III.84	
Мс/1289		20/I.85	
2790	24/III		
5275	21/III 81		
479	8/II.82		

ՅՀ [ՀՈՒԼԻԱ]
Յե-59
22 MAY 2008

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ Տ. ՆՈՒՐ.

ԷՄԻԼ ԶՕԼԱ

ՆՐԱ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

(Համառօտ հանրամատչելի տեսութիւն)

Կազմեց Յարութիւն Եսայեան

ԲԱԿՈՒ
Տպարան Ս. Անտոնեանի
1903

19 NOV 2010
84.092
Շ-75 Ե.
Սկ.

ԷՄԻԼ ԶՕԼԱ

ՆՐԱ ԿԵԱՆՔԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

(Համառօտ հանրամատչելի տեսութիւն)

1002
7530

Կազմեց Յարութիւն Եսայեան

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ Տ. ՆՈՒՐ։

ԲԱՔՈՒ
Տպարան Ս. Անտոնեանի
1903

08.04.2013

7813

Дозволено Цензурою. Тифлисъ, 11 Января 1903 г.

ԷՄԻԼ ԶՕԼԱ

XIX-րդ դարու եւրոպական գրականութեան հորիզոնի վրայ ամենափայլուն աստղերից մէկն էր Էմիլ Զոլան, որ ոգով և մարմնով նատուրալիստ էր, և որ իւր մեծ տաղանդով ու զօրեղ գրչով պարագլուխ հանդիսացաւ նատուրալիզմ ուղղութեան, որի հիմքերը դրել էին Բալզակ, Ֆլոբեր, Գոնկուր եղբայրներն և յետոյ Զոլան շնորհիւ իւր մանրազնին ու թափանցիկ խելքի, բարձրացրեց այդ հիմքերը և կառուցեց նատուրալիզմի վիթխարի ամրոցը։ Զը լինէր Զոլան, նատուրալիզմը այդչափ մեծ քայլեր չէր անի և դուցէ չքանար իւր սաղմերի մէջ։ Էմիլ Զոլան միայն իրրև մարտնչող ու յեղաշրջող մի մեծ ոյժ, մարտնչելով ժամանակակից գրականական հոսանքների հետ և յաղթելով հաղարաւոր որոգայթների, որ լարւում էին նրա հակառակ կուսակիցների կողմից, յեղաշրջեց գրականութիւնը, հիմնելով նատուրալիզմը։

Էմիլ Զոլան ծնուել է Փարիզում 1840 թ. Ապրիլի 2-ին։ Նրա հայրը՝ իտալացի Ֆրանսուան, վերին աստիճանի աշխատասէր և գործնական մարդ էր։

Նա յաճախ ճանապարհորդում էր զանազան տեղեր, ծանօթանում գործնական կեանքի հետ, փորձւում, սովորում և պաշտօններ վարում։ Փարիզի մօտակայ գիւղաքաղաքի՝ Էքսի համար, նա ձեռնարկում է ջրանցք անցկացնել, որի պատճառով մեծ դիմադրութեանց է հանդիպում խաւարամիտ բնակիչների կողմից։ Ջրանցքը չը վերջացած, Ֆրանսուան վախճանւում է, թողնելով փոքրիկ Էմիլին եօթ տարեկան հասակում։ Մահուանից յետոյ, բացի տան չրեղ կահկարասիքից, ուրիշ ոչ մի նիւթական չը մնաց դժբախտ ընտանիքի համար։

Ընտանիքի միակ յոյսն ու մխիթարանքը մնաց Էմիլը, որի կրթութեան մասին դեռ մտածող չը կար. նա վայելում էր լիակատար ազատութիւն։ Շուտով նրան տուին Իզօարի «Ստուածամօր պանսիօնը», որտեղ նոյնպէս ազատութիւնն էր մեթոդը։ Երբ ուզում էր Էմիլը, դաս էր պատրաստում, երբ ցանկութիւն չունէր սովորելու, խաղում էր այգում։ Այդ տեղից նրան տուին Կօլլէգ, որտեղ նա սկզբում ցոյց տուեց մեծ յառաջադիմութիւն և ստացաւ մի քանի մրցանակներ։ Այստեղ նա ունեցաւ երկու մտերիմ ընկերներ, Սեզան և Բայլ անունով, որոնց հետ թէ դասեր էր պատրաստում և թէ զանազան նամակագրութեանց և շարադրութեանց մէջ մտնում. նրանք յաճախ քաղաքից դուրս ճանապարհորդութիւններ էին կատարում Էքսի կողմերում, որոնց ժամանակ նրանք ծանօթանում և հրճւում էին բնութեան հրաշալիքներով, կարդում էին իւրեանց հետ վերցրած գրքերը, առաւելապէս Հիւգոյի և Միւսսէի գրուածքները։

Էմիլի ընտանեկան դրութիւնն հետզհետէ վատանում էր։ Այն ամեն տան իրերը, ինչ որ կարելի էր վաճառել, ծախել էին և կերակրուել։ Ապրուստի աղբիւրը բոլորովին կտրուած էր։ Շուտով մեռաւ և Էմիլի մեծ մայրը։ Մայրը այս դէպքից յետոյ վերադարձաւ Փարիզ, յոյս ունենալով ամուսնու կողմնակիցներից հասանելիքներ ստանալու։ Էմիլն էլ փոքր ինչ յետոյ մօր կոչով եկաւ Փարիզ, թողնելով Կօլլեգը։ Ահա այս ժամանակներից առաջ է գալիս Էմիլի մէջ գրական ոգի, նա սկսում է շարադրութիւններ գրել, նամակներ ուղարկել իւր ընկերներին. այս գրուածքների մէջ արդէն երևան են գալիս գրողի ձիրքերն ու յատկութիւնները։

Սկզբում նա սիրում էր ոտանաւորներ գրել, բայց շուտով թողեց պօէզիան և նուիրուեց պրոզային։ Փարիզում նա մտաւ ճեմարան, որտեղ դասաւանդւում էր և հռետորութիւն։

Բայց ճեմարանը իւր միապաղաղ և ծանր աշխատանքներով նրան մի «բանտ» թուաց և աւարտելով հռետորութիւնը, միանգամից բարձր կուրսերի քննութիւն տուեց։ Բայց դժբախտաբար նրան չտուին դիպլոմ։

Էմիլ Զոլան ամառն գալով Էքս իւր ընկերների՝ Սեզանի և Բայլի մօտ, հանկստացաւ ծանր աշխա-

տանքներից, և վերադառնալով քաղաք, վճռեց կըրկին քննութիւն տալ վկայական ստանալու համար։ Այս անգամ էլ նա վատ քննութիւն տուեց։ Այնուհետև ընտանեկան նեղ դրութիւնն ստիպեց նրան փնտրել ֆիզիքական աշխատանք, ապրուստ հայթհայթելու համար։ Նա որոշեց մտնել տպարան իբր գրաշար։ Այդտեղ նա ստացաւ 60 ֆրանկ վարձ։ Բայց երկար չը կարողացաւ մնալ և փախչելով տպարանից սկսեց թափառական կեանք վարել և միևնոյն ժամանակ գրում էր զանազան նիւթեր։ Փոքր ինչ անց նա մտաւ յայտնի հրատարակիչ Աշէտի մօտ պաշտօնի ամսական 100 ֆրանկ ռոճիկով։

Այս ժամանակներում նա գրեց առաջին պիէսը «Սիրային կոմեդիա» խորագրով, ապա «Խեղճերի քոյր», «Կլօդի խոստովանանքը» և ուրիշները։ Աշէտի մօտ աշխատելով հանդերձ, Զօլան աշխատակցում էր զանազան թերթերի, առաւելապէս «Հասարակական բարեկամութեան» թերթին։ Նա սկսում է քննադատութիւններ գրել Հիւգոյի, Գոնկուր եղբայրների և այլոց մասին։ Սկսում է հետևել Բալզակի և Ֆլոբերի ուղղութեան։ Շուտով Զօլան հեռացաւ Աշէտի մօտից և սկսեց պարապել միմիայն գրականութեամբ։ Նա երևան եկաւ և իբրև դրամատուրգ, գրելով առաջին անգամ „Գէշ“ („Laide“), փոքր ինչ յետոյ էլ նա դարձաւ „Événement“ ամենօրեայ թերթի աշխատակից և քրոնիկիօր, որտեղ նա գրում էր հետաքրքիր յօդուածներ և որոնց համար ամսական ստանում էր 500 ֆրանկ։

Այս մեծ յաջողութիւնից յետոյ ինչ-ինչ պատճառներով Զօլան թողնում է „Événement“ լրագիրը և աշխատակցում է ուրիշներին։ Հետզհետէ առաջ են գալիս նրան թշնամիներ գրած յօդուածների պատճառով։ Ահա այս մանր մունր գրական փորձերը զարգացրին նրա մէջ բնականից էլ եղած գրելու արուեստն ու տաղանդը։ Նա իրեն նուիրեց գրականութեան և սկսեց պարապել ինքնակրթութեամբ միևնոյն ժամանակ ուշի ուշով հետևելով ժամանակակից գրականական շարժմանը։

XIX դարը գրականական աշխարհի „մեծ շարժման“ դարն է, երբ գրականութեան մէջ մտան յեղաշրջող նոր հոսանքներ և զեկավար ունենալով տաղանդներ ու հանճարներ, իրենց ընթացքի մէջ առան շատ գրողների։

XIX դարում գրականական նոր ուղղութիւններից առաջինն էր բոմանտիզմը, որ յանձին Վիկտոր Հիւգոյի իր գագաթնակէտին հասաւ։ Մինչև Հիւգոն և մասամբ նրա ժամանակ „կեղծ կլասիքական“ գրուածքներով հեղեղւում էր Եւրոպայի գրականութիւնը։ Այդ գրուածքներն՝ իրենց կեղծ ու շինծու տիպերով, անբնական հոգեբանութեամբ, խառն իդէալներով, իրականից ու ժողովրդի երևակայութիւնից դուրս բովանդակութեամբ, անմատչելի էին մնում հասարակութեան ստորին և միջին խաւերին։ Բայց մի բան, որ ընդհանրութեանը մերձենալի չէ, պի-

տանի չէ, բնականաբար պէտք է վերջ ի վերջոյ հեռանայ ասպարիզից, տապալուի։ Առաջ եկան նոր գրողներ, որոնք զգալով հին, փտած ուղղութեան անպիտանութիւնը, շեղեցին իրենց ընթացքը և սկսեցին գրել նոր ուղղութեամբ, որով աւելի բնականին մօտեցան վէպերի նիւթերն ու տիպերը, և հետևաբար ժողովրդին. էլ հասկանալի ու հետաքրքիր։

Ռոմանտիզմը, որի հայրը Հիւգօն էր, մի այնպիսի ուղղութիւն էր, որ թէև հեռացել էր կեղծ կլասիքականից, բայց այնուամենայնիւ, դեռ շատ հեռու էր իրական կեանքից։ Ռոմանտիզմը հիմնուած էր գլխաւորապէս երևակայական աշխարհի վրայ։ Այդ ուղղութեամբ գրողի համար հարկաւոր էր վառ ֆանտազիա, որպէս զի սլանայ հեռու, հեռու մի նոր ցանկալի աշխարհ, որտեղ մարդիկ աւելի լաւ յատկութիւններ ունենային, բնութիւնն իւր հաղարաւոր տեսարաններով աւելի գեղեցիկ լինէր։ Եւ որքան վառ ֆանտազիայ ունէր գրողն, այնքան մեծ էին նորա մտքի թռիչքներն, այնքան բարդ ու շինծու, և ըդհակառակն։ Այդպիսով գրուածքն ամբողջովին արտադրութիւն էր հեղինակի մտքերի, երևակայութեան ու իղձերի ձուլմունքին։ Շատ պարզ է, որ այսպիսի գրուածքները կը լինին սուբեկտիւ և հեղինակի եսը կը լինի գրքի ծուծը։

Վիկտոր Հիւգօն՝ Ռոմանտիզմի պարագլուխը, իր անսանձ երևակայութեամբ, իր հանճարով և

զօրեղ գրչով նուաճեց ժամանակակից շատ մտքեր և հիմնեց Ռոմանտիզմի դպրոցը, բայց միւս կողմից աննկատելի կերպով գլուխ էր բարձրացնում մի նոր ուղղութիւն, որ պիտի տապալէր Հիւգօյի դպրոցը։

Դա Նատուրալիզմն էր։

Քաղաքակրթութիւնը, կուլտուրան և գիտութիւնը առաջ գնալով փոխում են մարդու արտաքին և ներքին աշխարհների պայմանները, նորանոր փաստեր տալիս, հինը՝ անհասկանալին պարզում մեզ։ Եւ ահա փոխուելով ֆիզիքական ու մտաւոր դրութիւնները, փոխւում էին ստեղծած ու սահմանած մտաւոր կեանքի պայմանները։ Բարդը, անհասկանալին, վարագուրածը պէտք է պարզուին հասարակութիւն կազմող իւրաքանչիւր անհատի համար։

Հիւգօն արդէն ընդլայնել էր գործունէութիւնը, շատ հետևողներ գտել, երբ նրան ախոյեան հանդիսացաւ Բալզակը։ Սա հիմնեց մի նոր դպրոց, նոր շկոլա, որ հիմնովին տապալեց Հիւգօյի շկոլան։ Նա սնուելով, մեծանալով կեանքի բազմազան պայմանների մէջ, թափանցեց աւելի խոր ժողովրդի մտքի ու հոգու մէջ և գտաւ այն մեծ գաղտնիքը, որ ժամանակակից գրականութիւնն ընդհանրութեան մտաւոր քաղցի յագնեցնող սնունդ չէր։ Նա կարդալով Հիւգօյի գրուածքները և համեմատելով իրական կեանքի հետ, գտաւ մեծ տարբերութիւն և ահա ինքն իւր կողմից վերցրեց գրիչն ու սկսեց գրել Հիւգօյի հակառակ՝ նոր ուղղութեամբ—Նա-

տուրալիստական ոգով։ Նա սկսեց ուսումնասիրել ժողովրդի կեանքը, մտնելով նրա խաւերի մէջ, ուսումնասիրել իրականը. այդպիսով հաւաքեց իւր համար գրելու պաշար, որից արտագրեց վէպեր և պատկերներ. նրա գրուածքները սուբեկտիւ էին, որովհետև ինքն համարեա ամեն վէպի ու պատկերների մէջ երևան է գալիս քօղարկուած կերպով։ Իսկ նրա յետագաներն, ընդհակառակն, աշխատում էին լինել օբեկտիւ գրող։ Բայց Բալզակի վերաբերմամբ այն թերի կողմը չը պէտք է համարել, որովհետև նա գրական ասպարիզի ամենամեծ հերոսը դարձաւ, հիմք դնելով նատուրալիզմի, որի սկզբունքները կազմում էին իրական կեանքը և նրան ուսումնասիրելը դիտելով ու փորձերով։

Բալզակի յաջորդը՝ Ֆլոբեր, աւելի առաջ անցաւ։ Ֆլոբերը լինելով բժշկի որդի, հետաքրքրուելով բժշկականութեամբ, ուսումնասիրեց մարդու կազմուածքը, ուղեղը, ջղերը և այնուհետև իր գրուածքներում մարդուն ներկայացնում էր իր նորմալ գրութեան մէջ, առանց նրան իդեալացնելու, բարձրացնելու իրական դրութիւնից։ Բացի այդ նա աշխատեց հեղինակին դնել օբեկտիւ դրութեան մէջ, առանց կարծիքներ յայտնելու և բացականչութիւններ անելու վէպի ընթացքում. և այդ շատ յաջողուեց Ֆլոբերին, մանաւանդ իր «Տիկին Բովարին» վէպում։ Ապա նշանաւոր են Գոնկուր եղբայրները, որոնք նա-

տուրալիզմին տուին լաւ ոճի և գեղարուեստական նկարագրութեան արուեստները։

Համարեա թէ նատուրալիզմի հոգը պատրաստ էր, որ ահա երևան եկաւ Էմիլ Զոլան։ Նա ունէր բոլոր այն յատկութիւնները, ինչ որ պէտք է ունենայ նատուրալիստ գրողը։ Բայց Զոլան իր նախորդներից աւելի մեծ հերոս հանդիսացաւ իբրև վիպասան։ Նա աւելի մանրազնին կերպով ուսումնասիրեց շրջապատող կեանքը, մթնոլորտը, մարդկանց, նրանց յարաբերութիւնները, չ՚զլանալով հանդերձ որոշ նպատակի համար մտնել այդ նպատակին համապատասխան դրութեան մէջ։

Զոլան հանճար էր և տաղանդ։ Նրա գրիչն ամենակարող էր։ Նա, մտնելով գրական ասպարէզ, սկսեց անընդհատ աշխատել, գրել, կեանքի բազմազան և խրթին կողմերն արտայոլելով իր գրուածքների մէջ։ Նա անաչառ և անխտիր կերպով նկարագրում էր անհոգ հաստուղեղ ու հաստափոր բուրժուազին, որ բացի իր եսական բաւականութիւններից, ոչնչի մասին չէր մտածում. Զոլան ներկայացնում էր բարոյական անկման ամենավերջին կէտին կանգնած բանաւորին ու պոռնկացած կանանց. նա յայտնի է կացուցանում ֆրանսիական «կրթուած գողերի ու աւազակների» սխրագործութիւններն, խաբելը, յափշտակելը, որսալը։ Նա ոչ-ոքից չէր վախենում, չէր կարմրում, այլ իր ներքին ձայնի դրդմամբ, իր խոր համոզմունքով, անխնայիր

կերպով գրչի տակ ձգելով ուսումնասիրած շրջանն իր դրական ու բացասական հերոսներով։ Զոլան ծանօթացաւ ռուս յայտնի գրող Տուրգենեվի հետ, որի միջնորդութեամբ դարձաւ ռուսաց «Вѣстникъ Европы» ամսագրի աշխատակից 1870—1880 թիւը, գրելով «Պարիզեան նամակներ», որոնցով նա աշխատում էր նատուրալիզմը պարզաբանել։

Զոլան աշխատեց բացատրել ու լրացնել իւր բանաստեղծական—գեղարուեստական գրչով զանազան թէօրաներ, որոնցից առաւելապէս կանգ է առել ժառանգականութեան օրէնքի վրայ։ Նա աշխատում, պարզ կերպով ցոյց է տալիս մարդու հոգեկան ու ֆիզիկական յատկութեանց ազդեցութիւնը նրա ապագայ սերնդի վրայ։ Այդ նիւթի վերաբերմամբ նա գրել է Ռուգոն Մակկարների 20 հատորները, որ մի բարդ և վիթխարի գրական գործ է, որը միայն Զոլայի կարող գրիչն արտադրեց. բոլոր հատորների հիմնաքարը՝ հերոսին Ադելայիդա—Ֆուքսն է որ խելացնոր, նեարդային կին էր, նա ամուսնանում է 2 անգամ։ Եւ ահա Զոլան մեծ հմտութեամբ հետևում է այս ամուսնութիւններով սիրած սերունդներին, տալով նրանց մանրման հոգեբանութիւնը, շրջապատող հանգամանքները, կրած ազդեցութիւնները. պահպանելով մի ընդհանուր կապ և բացատրելով ու լուսաբանելով ժառանգականութեան օրէնքը»։

Միւս գրուածքներում աշխատում է բացատրել

միւս զգացմանց օրէնքները, օրինակ սիրոյ զգացմունքը, որը Զոլան համարում է սեռական օրգանների հասունացած դրութեանց հետևանք, զարգացման տարբեր աստիճանների։ Մակայն սիրոյ էութիւնը նոյնքան խորագնին է և անըմբռնելի, որ Զոլան էլ չը կարողացաւ վերջնական վճիռ տալ սիրոյ վերաբերմամբ։ Բայց որովհետև մեր նպատակն է համառօտ ու ամփոփ տեղեկութիւն տալ դէքոյկիս հերոսների մասին, ուստի կարճ ենք կըտրում Զոլայի գրական նշանակութեան մասին, քանի որ կարելի է ահագին հատորներ գրել նրա խոր փիլիսոփայութեանց ու հանճարի մասին։

Էմիլ Զոլան ունի անթիւ գրուածքներ, որոնք տասնեակ անգամ տպագրուել ու հարիւր հազարներով տարածուել են աշխարհիս ամեն կողմերը։ Նրա դեռ սկզբնական գրուածքները լոյս տեսան 1864 թուին հեքիաթներ Նինոնին (Contes à Ninon) վերնագրով։ 1867-ին հրատարակեց «Thérése Raquin» վէպը, որ հայածուեց հակակուսակցներից։ 1877-ին լոյս տեսաւ Զոլայի «Assommoir» վէպը, որի մէջ նոյնպէս պարզօրէն երևան եկան հեղինակի տաղանդը։ Նշանաւոր են «Նանա»—Nana, (1880 թ.), «Պարիզի Որովայնը»—La Ventre de Paris, (1873 թ.), Նորին «Գերազանցութիւն Էօժէն Ռուգոն» (1876 թ.), «Սիրոյ մի էջ» (1878 թ.), «Պտուկը»—Pot-Bouille (1882 թ.), «Ապրելու ուրախութիւնը» (1883 թ.), «Ժէրմինալ» (1885 թ.), «Եր-

կիրը» (1888 թ.), «Մարդ-Գազանը» (1890 թ.), «Դրամը» (1891 թ.), «Աղէտը»—Le Débâcle (1892 թ.), «Դոքտոր Պասկալ» (1893 թ.)։ Զոլայի վերջին աշխատութիւնները կազմում էին—Բեղմնաւորութիւն, Աշխատութիւն և Ազատութիւն, որոնցից առաջին երկուսը հրատարակվեցին 1890 և 1891 թ. երրորդը նոր էր սկսել հրատարակվել, իսկ չորրոդը բոլորովին չի լոյս տեսել։ Եւ ուրիշ շատ մեծ ու փոքր գրուածքներ, պատկերներ հասարակական կեանքից, որոնցից իւրաքանչիւրի մէջ փիլիսոփայօրէն տքնում է բացատրել զանազան հոգեկան գրութիւնները։

Այսպիսով Զոլան բարձրացրեց նատուրալիզմը փառքի գագաթնակէտին, բարձրանալով միաժամանակ և ինքը՝ իբրև հանճար. նրա գրուածքները տասնեակ հազարներով տարածուեցան աշխարհիս չորս կողմը. թարգմանուեցան բոլոր լեզուներով, մուտք գործեցին ամեն մի կարդացող մարդու տանը։

Եւ դեռ շատ պտուղներ կը տար նրա բեղմնաւոր ուղեղը, բայց ի մեծ ցաւ գրականութեան, 1902 թ. սեպտեմբերի 16-ին. Զոլան կնքեց իւր մահկանացուն, յիշատակ թողնելով գրականութեան ասպարիզի վրայ կանգնեցրած մի ամուր արձան՝ որպէս փիլիսոփայի ու մեծ պատմաբանի։



ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0317321